Սպառողն իրավունք ունի նաև ցանկացած պահի դիմելու դատարան:

Սպառողի դիմելու օրվանից 5 օրվա ընթացքում էլեկտրամատակարարող ընկերությունը պարտավոր է ստուգել իր գրառումները և ստուգման արդյունքների մասին գրավոր հայտնել սպառողին:

Վճարման փաստաթղթերում սխալը հաստատվելու դեպքում, եթե սպառողը՝

ա) ըստ տրված վճարման փաստաթղթի արդեն կատարել է վճարումը, ապա էլեկտրամատակարարող ընկերությունը պարտավոր է ուղղել սխալը և սպառողի համաձայնությամբ՝

- ավել գանձված գումարը վերադարձնել կամ ձևակերպել որպես կանխավճար (ավել գանձված գումարը սպառողին է վերադարձվում նրա դիմելու պահից 7 օրվա ընթացքում,
- պակաս վճարելու դեպքում՝ այդ գումարը հաշվի առնել ընթացիկ հաշվարկային ամսվա համար տրվող վճարման փաստաթղթում,

բ) ըստ տրված վճարման փաստաթղթի վճարում չի կատարել, նրան տրվում է վճարման նոր՝ ճշտված փաստաթուղթ, ըստ որի վճարումը կատարվում է սահմանված կարգով:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ (ՀԱՇՎԻՉԻ) ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Էլեկտրամատակարարող ընկերությունը սպառողի էլեկտրակայանքները լարման տակ է դնում էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելուց հետո՝ սահմանած կարգով կապարակնքված էլեկտրաէներգիայի հաշվառքի սարքերի առկայության և էլեկտրակայանքներում տեղակայման թերություններ չլինելու դեպքում:

Սպառողը իրավունք ունի լրացուցիչ կապարակնքել հաշվառքի սարքերը (առևտրային հաշվիչ, հոսանքի տրանսֆորմատորներ և այլն):

Պայմանագրում պարտադիր նշվում են առևտրային հաշվիչը և հաշվառքի մյուս սարքերը, դրանց գործարանային համարները և տեխնիկական պարամետրերը:

Սպառողի (բաժանորդի) էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման և տեղադրման ծախսերը կատարում է էլեկտրամատակարարող ընկերությունը

Առևտրային հաշվառքի սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ.

ա) բացառվի նրանց մեխանիկական վնասվածքների կամ միջավայրի գործոնների անթույլատրելի մակարդակների ազդեցության հնարավորությունը,

բ) բացառվի կողմնակի անձանց միջամտությունը հաշվառքի սարքերի միացման սխեմային և նրանց աշխատանքին,

գ) ապահովվի սպառողի և էլեկտրամատակարարող ընկերության ներկայացուցչի համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը,

դ) ապահովվի հաշվառքի սարքերի պահպանման և շահագործման անվտանգությունը,

ե) վտանգ չսպառնա մարդկանց կյանքին և առողջությանը:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերվում է բնակչությանը էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններին, մասնավորապես էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրին, մատակարարող ընկերության և սպառողի իրավունքներին և պարտականություններին, վճարման կարգին, էեկտրաէներգիայի հաշվառքի սարքերի տեղադրման և շահագործման կանոններին և հարակից այլ հարցերի:

Հունիս 2005

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (հետագա տեքստում՝ հանձնաժողով) 29.05.2001թ-ի թիվ 22 որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների» համաձայն, էլեկտրամատակարարի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից բնակչության էլեկտրամատակարարումը իրականացվում է էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրի հիման վրա:

էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագիրը (հետագա տեքստում՝ պայմանագիր) մատակարարի և սպառողի /բաժանորդի/ (հետագա տեքստում՝ սպառող) միջև կնքված էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, սպառված էլեկտրաէներգիային դիմաց վճարումը և հարակից այլ հարցերը կարգավորող փաստաթուղթ է:

Էլեկտրամատակարարող ընկերությունը էլեկտրաէներգիայի ծախսերը և վճարումները հաշվառելու համար սպառողի հետ պայմանագիր կնքելու օրվանից բացում է սպառողի հաշվառման քարտ:

Բաշխման ցանցին սպառողի միացման տեխնիկական պայմանները առաջադրում է էլեկտրամատակարարող ընկերությունը:

Տեխնիկական պայմաններ տալու համար էլեկտրամատակարարող ընկերությունը սպառողից գանձում է ծառայության վճար՝ հետևյալ չափերով.

ա) մինչև 35 կՎ լարման բաշխիչ ցանցին միանալու համար՝ 5000 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) 35 կՎ և 110 կՎ լարման բաշխիչ ցանցին միանալու համար՝ 10000 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Տեխնիկական պայմաններ տալու համար էլեկտրամատակարարող ընկերության կողմից գանձված ծառայության վճարը վերադարձման ենթակա չէ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մատակարարը պարտավոր է.

ա) սպառողին մատակարարել անընդհատ և տեխնիկական նորմերին ու ստանդարտներին համապատասխանող որակի (լարումը՝ 209-242V) և անհրաժեշտ քանակի էլեկտրական էներգիա,

բ) էլեկտրամատակարարման ընդհատումը վերականգնել **24 ժամվա** ընթացքում, բացառությամբ մատակարարից անկախ և օրենսդրությամբ նախատեսված հանգամանքների և պատճառների,

գ) էլեկտրամատակարարման ընդհատումը վերականգնել պարտքի վճարումը վկայող փաստաթուղթը ներկայացվելուց հետո՝ **12 ժամվա** ընթացքում,

Սպառողը պարտավոր է.

ա) ժամանակին վճարել ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց,

բ) բնակարանը օտարելու (վաճառելու, փոխանակելու և այլն) դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, պայմանագրի գործողությունը դադարեցնելու, որի մասին սպառողին տրվում է տեղեկանք:

ԱՊԱՌՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է համաձայն հաշվիչի ցուցմունքի:

Սպառողը սպառված էլեկտրաէներգիայի համար վճարում է մատակարարի կողմից ներկայացված հետևյալ փաստաթղթերի հիման վրա.

ա) անհատական վճարման փաստաթուղթ,

բ) տեսանելի տեղերում փակցված վճարման ցուցակներ,

գ) վճարման կետերում գրանցված վճարագրերը (վճարման կետերում ստացված տեղեկատվությունը):

Վճարման համար հատկացված 7-օրյա ժամկետում սպառողի կողմից վճարում չկատարելու դեպքում մատակարարը գրավոր (գրություն, ֆաքս, հեռախոսագիր, էլեկտրոնային փոստ) զգուշացնում է սպառողին: Զգուշացումից հետո 3 օրվա ընթացքում չվճարելու դեպքում էլեկտրամատակարարող ընկերությունը **իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը:**

Էլեկտրամատակարարող ընկերությունը կարող է չդադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը, եթե սպառողը ներկայացրել է էլեկտրամատակարող ընկերության համար ընդունելի վճարման երաշխիքներ և (կամ) նրա հետ պայմանագրային ձևով կազմվել է պարտքի մարման ժամանակացույց:

Պարտքը ժամանակացույցում ամրագրված ժամկետներում չմարելու դեպքում էլեկտրամատակարարող ընկերությունն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը:

Վճարման փաստաթղթերում սխալի հայտնաբերման, ինչպես նաև մատակարարի կողմից սպառողի իրավունքների խախտման դեպքերում սպառողը կարող է դիմել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (ք. Երևան, Նոր Նորք, Ա. Արմենակյան 127, հեռ. 526461, 651153, էլ. փոստ՝ press@ena.am), **իսկ հարցի բավարար լուծում չստանալու դեպքում**՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ հեռ. 584529, ֆաքս՝ 525563, էլ. փոստ՝ psrc@psrc.am, ինտերնետային կայք՝ www.psrc.am: